Հավելված 1

Բնապահպանական և սոցիալական պահանջներ

Վարկառուն պարտավոր է՝

- մշակել և Բանկ ներկայացնել բոլոր ՇՄՍ (շրջակա միջավայրի և սոցիալական) կառավարման գործիքները,
- ներկայացնել հաշվետվություն տրամադրված վարկի ՇՄՍ, առողջության և անվտանգության կատարողականի մասին ռիսկի դասակարգմանը համարժեք հաճախականությամբ, բայց ոչ պակաս քան տարին մեկ անգամ և անմիջապես՝ դժբախտ պատահարների դեպքում,
- մշտադիտարկել և ապահովի ՇՄՍ գործիքներից յուրաքանչյուրի իրականացումը,
- երաշխավորել իր կապալառուների, ենթակապալառուների և մատակարարների համապատասխանությունը վարկին առնչվող ՇՄՍ գործիքներով սահմանված պահանջներին ու միջոցառումներին,
- անհրաժեշտության դեպքում և մատակարարման շղթայի ռիսկերը մեղմելու համար (օրինակ՝ որպես Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի մաս) ապահովել աշխատանքային իրավունքների/չափորոշիչների պահպանումը արևային ֆոտովոլտային նախագծերի մատակարարման շղթաներում, ներառյալ արևային ֆոտովոլտային մոդուլների արտադրությունը: Անհրաժեշտության դեպքում մատակարարման պայմանագրերում կամ կապալառուների և նրանց մատակարարների համար մրցութային փաստաթղթերում ներառել բավարար պահանջներ (օրինակ՝ կապալառուների և մատակարարների էթիկայի և վարքագծի կանոնագիրք, հավաստագրեր, երաշխիքներ, հայտարարագրեր և պարտավորություններ և այլն): Պայմանագրային դրույթները պետք է նպատակ ունենան ապահովել մատակարարման շղթաներում հարկադիր աշխատանքից խուսափումը:
- հանրայնացնել շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների վերաբերյալ հեշտ ըմբռնելի ոչ տեխնիկական ամփոփագիրը և առաջարկվող մեղմացման միջոցառումները: